

ՌԵՅԵՐԱՏ

УДК 616.24—002—053.2

Լ. Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ա. Ա. ՎԱՆՅԱՆ, Ի. Գ. ՎԱՍԻԼԵՎԱ, Ն. Ի. ԴԵՆԵԺՅԱՆ

ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ՈՉ ՍՊԵՑԻՖԻԿ ԹՈՔԱՐՈՐԲՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՄՊԱՆԻ
ԵՎ ԲՐՈՆԽԵՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՖԼՈՐԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Մեր խնդիրն է եղել տալ խրոնիկական ոչ սպեցիֆիկ թոքաբորբով տա-
ռապող երեխաների բրոնխների պարունակության, ինչպես նաև ըմպանի ֆլո-
րայի մանրակրկիտ մանրէաբանական բնութագիրը: Հետազոտման համար
նյութ են ծառայել հիվանդ երեխաների բրոնխների պարունակությունը, ինչպես
նաև վերջիններիս ըմպանի լորձը: Հետազոտվել է 110 երեխա, ըստ որում 21-ը
հիվանդության 1-ին շրջանում, 32-ը՝ 2-րդ և 57-ը՝ հիվանդության 3-րդ՝ բրոն-
խեկտատիկ շրջանում:

Բրոնխոսկոպիայի մեթոդի միջոցով հատուկ փորձանոթներում մանրէա-
պուրկ խողովակներով (կատետեր) էլեկտրական պոմպի օգնությամբ արտա-
ծրծվել է բրոնխների պարունակությունը: Ըմպանի լորձը վերցվել է մանրէազուրկ
սամպոնով, ըմպանի ետին պատից, առանց հպվելու լեզվաբամառի շրջանին:
Բրոնխոսկոպիայից անմիջապես հետո հետազոտվող նյութը ցանվել է կաթնա-
ղային, արյունային ազարների, Լեինտալի, Սաբուրոյի, էնդոյի միջավայրերի
վրա և շաքարային արգանակի (բուլյոնի) մեջ: Վերահիշյալ ձևով կատարվել
է 417 մանրէաբանական հետազոտություն:

Ստացված տվյալների համեմատական վերլուծությունից պարզվեց, որ
հայտնաբերման հաճախականության իմաստով մանրէների հարստությամբ
առաջին ըմպանի միկրոֆլորան է:

Այդ երևում է նաև մանրէային համակցությունների աղյուսակից, ըստ որի,
ըմպանում 2—4 տեսակ մանրէներից համակցությունները կազմում են 39,1%,
մինչդեռ բրոնխներում այն կազմում է 70%:

Խմորանման սնկերը, աղիքային ցուպիկներն ու գրամ (—) մանրէները
ավելի մեծ հաճախականությամբ հանդիպում են խրոնիկական թոքաբորբով
տառապող հիվանդների բրոնխներում, քան ըմպանում: Քանի որ հետազոտված
հիվանդների կեսը (51,9%) տառապում է բրոնխէքտազներով, այսինքն այստեղ
առկա է թոքի խրոնիկ թարախակալման պրոցեսը, այդ իմաստով աղիքային
ցուպիկների ու խմորանման սնկերի հայտնաբերման հաճախականության
գերակշռությունը բրոնխներում լրիվ հասկանալի է: Ընդհակառակը, ստաֆի-
լոկոկերը, ստրեպտոկոկերը, դիպլոկոկերը, գրամ (+) ցուպիկներն ավելի
հաճախ հանդիպում են ըմպանում, քան բրոնխների պարունակությունում:

Հավանաբար, հակաբիոտիկոթերապիան, որն անսպալմանորին կիրառվում է խրոնիկական ոչ սպեցիֆիկ թոքաբորբերի ժամանակ, արդյունավետ է վերահիշյալ մանրէների նկատմամբ, ուստի բրոնխների պարունակությունում նրանք ավելի պակաս հաճախականություն մեծ հայտնաբերվում։ Առհասարակ ըմպանի և բրոնխների ֆլորայի հետազոտությունից ստացված տվյալների համընկնում չի հայտնաբերվել ոչ մի դեպքում։

Հանրագումարի բերելով շարադրվածը, կարելի է եզրակացնել, որ ըմպանի ֆլորան սպառիչ կերպով չի արտացոլում թոքի բորբոքական օջախի միկրոֆլորան և այդ առումով, բրոնխների միկրոֆլորայի մանրակրկիտ մանրէաբանական հետազոտության համար բրոնխոսկոպիայի մեթոդի առավելություններն ակնառու են։

Երևանի բժշկական ինստիտուտի

միկրոբիոլոգիայի ամբիոն,

Մոսկվայի բժշկների վերապատրաստման

ինստիտուտի մանկական վիրաբուժության

ամբիոն

Ստացված է 18/VI 1969 թ.

Հղվածի լրիվ տեքստը դեպոնացված է ԳԵՏԻՆ-ում